

Ավարտվեց նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության
ռազմամարզական խաղերի մարզային փուլը

Հոկտեմբերի 25-ին Կապանի թիվ 5 հիմնական դպրոցի մարզադաշտում տեղի ունեցավ
նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերի
մարզային փուլը, որն անցկացվում էր սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Թիմերը մրցել են նռնակի նետում, Ցկզ-ոց ուսապարկով փոխանցումավազք, ձգումներ
պտտածողից, կրոսավազք (1000մ), ինքնաձիգի քանդում-հավաքում, հրաձգություն (օդամղիչ
հրացանով) մրցաձևերում:

Մարզային փուլում հաղթող ճանաչվեց Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ
և երրորդ տեղերը համապատասխանաբար գրավեցին Անգեղակոթի և Մեղրիի թիվ 1
միջնակարգ դպրոցների թիմերը:

Նոյեմբերի 2-5-ին Երևանում՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում,
Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի թիմը կմասնակցի մրցույթի հանրապետական փուլին:

Ռազմամարզական խաղերն կազմակերպվում և անցկացվում են ՀՀ սպորտի և

երիտասարդության հարցերի նախարարության կողմից, որին մասնակցում են

հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարաններից ձևավորված հավաքական թիմերը:

Ռազմամարզական խաղերը նպատակ ունեն նախազորակոչային և զորակոչային տարիքի

երիտասարդության կենցաղում արմատավորել առողջ ապրելակերպ, նախապատրաստել

նրանց հայրենիքի պաշտպանության համար, ՀՀ ազգային բանակում ծառայելու համար

դաստիարակել ֆիզիկապես առողջ և բարոյականային ուժեղ հատկանիշներով պատրաստ

երիտասարդներ: